ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշատի 1

№__2686-Ա___ « 07 » հուլիսի 2025 թ.

ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ Հ.7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սամվել, Ամալյա Թորոսյանների լ/ա Մանվել Թորոսյանի դիմումը /որը հանդիսանում է նաև ժառանգ/ Սիլիկյան թաղամասի 1-ին փողոցի հ.7 հասցեում գտնվող /տնամերձ/ հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Երևանի Շահումյանի անվան կոմունալ բաժնի 17.11.1960թ. № 32 տոմար 1050 գույքային թերթը, «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի 12.03.2024թ. Հ-1759 տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2024 թվականի օգոստոսի 8-ի հ.հ. 29330, 29331 և 29332 վկայագրերը և Հայաստանի Հանրապետության «Երևան» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված 08.08.2024թ. «Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման մասին» հ.29329 որոշումը:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշման հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 9-րդ գոտում /ծածկագիր՝ 01-001-0451-0009, համաձայն՝ ՀՀ կառավարության 24.12.2009թ. հ.1517-Ն որոշման/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Դ-42121-25 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Սիլիկյան թաղամասի 1-ին փողոցի հ.7 հասցեում գտնվող 1210.4քմ մակերեսով /տնամերձ/ հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ